ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք.Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-65-94, Ֆաքս՝ (010) 59-63-11, էլ.փոստ staff@police.am

№ 5/2/80016-23 «28» 06 2023թ.

«Իրազեկ Քաղաքացիների Միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող

Դանիել Իոաննիսյանին

Հարգելի պարոն Իոաննիսյան.

Ի պատասխան ՀՀ Ներքին գործերի նախարար Վ.Ղազարյանին հասցեագրված Ձեր՝ 09.06.2023թ. թիվ Հ-2437 հարցման 1-ին կետի հայտնում եմ, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության նախկին պետ Արթուր Ումրշատյանը 2023թ. փետրվարի 10-ին ժամը 23:11-ից, նույն ծառայության Երևան քաղաքի գնդի հրամանատար Անդրանիկ Իսախանյանը ժամը 23:16-ից գտնվել են «Համեր» մակնիշի ավտոմեքենայի հայտնաբերման վայրում՝ Ագաթանգեղոս փողոցում գտնվող կամարանցման տակ, իսկ նույն գնդի 2-րդ պարեկային գումարտակի նախկին հրամանատար Լևոն Բաղալյանն ի սկզբանե գտնվել է դեպքի վայրում:

Հարցման 2-րդ կետի կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վաշտի հրամանատար Ռոման Միրզախանյանի նկատմամբ նշանակված դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը և թիվ 15118523 քրեական վարույթի ամբողջ ծավալի նյութերը գտնվում են մեղադրյալ Գեղամ Սահրադյանի վերաբերյալ նշանակված ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննության կենտրոնում:

Ինչ վերաբերում է Ռոման Միրզախանյանի գործողություններին, ապա դրան անդրադարձ կկատարվի ծառայողական քննության վերջնական արդյունքներով՝ նախաքննության կամ դատաքննության ավարտից հետո:

Հարցման 3-րդ կետի կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվող ծառայողական քննության շրջանակներում պարզվել է, որ 2023թ. փետրվարի 10-ին «Համեր» մակնիշի 35 GM 730 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի օրինախախտ վարորդի տեղաշարժը կասեցնելու ժամանակ թվով 6 պարեկային ծառայողների կողմից հիշյալ ավտոմեքենայի ուղղությամբ արձակվել է 10 կրակոց:

Հարցման 4-րդ կետի կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվող ծառայողական քննության

շրջանակներում կատարված ստուգումների արդյունքում պարզվել է, որ ոչ բոլոր պարեկային ավտոմեքենաներում են առկա եղել ապակի կոտրելու գործիքներ, սակայն ձեռնարկված աշխատանքների շնորհիվ դրանք արդեն իսկ ամբողջությամբ համալրվել են վերը նշված ավտոմեքենաներում:

Հարցման 5-րդ կետի կապակցությամբ հայտնում եմ, որ «Համեր» մակնիշի ավտոմեքենայի օրինախախտ վարորդին հայտնաբերել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողները:

Հարցման 6-րդ կետի կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության հատուկ նշանակության գումարտակի ծառայողներն օպերատիվ կերպով արձագանքել են ճգնաժամային իրավիճակին և կատարել են համապատասխան գործողություններ՝ «Համեր» մակնիշի ավտոմեքենայի օրինախախտ վարորդի տեղաշարժը կասեցնելու համար:

Հարցման 7-րդ կետի կապակցությամբ հայտնում եմ, որ 2023թ. փետրվարի 10-ին, ժամը 22:45-ի սահմաններում, պարեկային ծառայողները ռադիոկապի միջոցով ճգնաժամային իրավիճակի մասին տեղեկացրել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնին:

Հարցման 8-րդ կետի կապակցությամբ հայտնում եմ, որ «Համեր» մակնիշի ավտոմեքենայի օրինախախտ վարորդի տեղաշարժը կասեցնելու ժամանակ վնասվել են քաղաքացիական 8, ոստիկանական 4, այդ թվում՝ պարեկային 3 ավտոմեքենաներ, և իրադրությամբ պայմանավորված՝ տվյալ ավտոմեքենայի կայանման պահերին, ոչ բոլոր ծառայողական ավտոմեքենաներին է հաջողվել դրա շուրջ անշարժ գոտի ստեղծել:

Հարցման 9-րդ կետի կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության ավտոմեքենան Հանրապետության հրապարակում ընդգրկված է եղել ծառայության որպես անշարժ պահակետ, ուստի հիշյալ գործողությանը մասնակցել չէր կարող:

Հարցման 10-րդ կետի կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել է և որոշում է կայացվել դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթով իրավական գնահատականի վերջնական արդյունքներով:

Հարգանքով՝

Պետ,
ոստիկանության գնդապետ ***Ա. Մկրտչյան***

Կատարող՝ Լ. Աղաջանյան
հեռ.010-59-67-92